*
* *

Նոյեմբերի 22-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան, Վեհարանում տեղի ունեցավ միաբանական հերթական նիստը, որին ներկա էր նաև Վեհափառ Հայրապետը:

Հավաքույթին խոսք առավ Բուենոս Այրեսից վերջերս ուխտավորաբար ս. Էջմիածին ժամանած Մայր Աթոռի միաբան Հովհաննես սրկ. Գրվրգյանը, որը ութ տարիներից ի վեր ծառայում էր տեղի հայ համայնքում որպես սարկավագ և կրթական մշակ: Բարեշնորհ սարկավագը հանգամանորեն ներկայացրեց Հարավային Ամերիկայի և հատկապես Արգենտինայի հայ գաղութի ազգային, եկեղեցական, կրթական կյանքը և պատասխանեց ներկաներից ոմանց հարցերին:

*
* *

Նոյեմբերի 26-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում պատարագեց տ. Արսեն եպս. Բերբերյանը և քարոզեց՝ «Այլ մեք առ սէրն Քրիստոսին մերոյ, ընդ այս յոյժ եմք խընդացեալ և կատարեալ պարգևս զսա իսկ համարիմք, զի ժամանակեալ վշտօքս զանժամանակ երանութիւնս ժառանգեսցուք» (Եղիշե):

Հավարտ սուրբ պատարագի Վեհափառ Հայրապետի նախագահությամբ կատարվեց կառավարական մաղթանք՝ նվիրված Հայաստանում սովետական կարգերի հաստատման 58-րդ տարեդարձին:

*
* *

Նոյեմբերի 29-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան, Վեհարանում տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթը: Հավաքույթին Վեհափառ Հայրապետը խոսեց Հայաստանում սովետական կարգերի հաստատման 58-րդ տարեդարձի մասին՝ նշելով անցնող 58 տարիների ընթացքում հայ պետականության առկայության պայմաններում հայ ժողովրդի ձեռք բերած նվաճումների մասին, բոլոր բնագավառներում:

*
* *

Դեկտեմբերի 2-ին, շաբաթ.—Տօն սրբոց առաքելոցն և առաջին լուսաւորչացն մերոց Թադէոսի և Բարթողիմէոսի.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ մատուցեց տ. Արտակ քհն. Սիմոնյանը:

*
* *

Դեկտեմբերի 3-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում ս. պատարագ մատուցեց տ. Մանուկ քհն. Մարգարյանը և քարոզեց՝ «Որք առիք զպատուէր քարոզել աներկիւղ զբանն կենաց աշխարհի» շարականի բնաբանով, ներկայացնելով հայ եկեղեցու առաքելական ծագման պատմությունը և հայ ժողովրդի կյանքում կատարած նրա նախախնամական դերը:

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ Ս. ԳԵՂԱՐԴ ՎԱՆՔՈՒՄ

Սույն թվականի հուլիսի 31-ին, կիրակի օրը, Ամենայն Հայոց Հայրապետի հրամանով, Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանը ս. Գեղարդ վանքում, խարտավիլակությամբ տ. Եղիշե քհն. Սարգսյանի, քահանա ձեռնադրեց ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի առաջին շրջանավարտներից Գուրգեն սրկ. Մուրադյանին:

Եկեղեցում ծառայելու հետ միասին Գուրգեն սարկավագը ավարտել է նաև Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը:

Նորընծա տ. Գուրգեն քահանան իր քառասունքը անցկացրել է ս. Գեղարդ վանքում:

Տ. Գուրգեն քահանան ծնվել է 1928 թվականին Էջմիածին քաղաքում: 1951-ին ավարտել է ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանը և ձեռնադրվել սարկավագ:

Այսօր ս. Գեղարդ վանքում պաշտոնավարում են չորս լուսամիտ և հավատավոր քահանա հայրեր, որպես նույն վանքի միաբանության անդամներ՝ տ. Եղիշե քհն. Սարգսյանը (վանահայր), տ. Մովսես, տ. Գուրգեն և տ. Աթանաս քահանա հայրերը:

Չորս քահանա հայրերը ավարտել են ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանը և ապա իրենց ուսումը կատարելագործել Երևանի պետական համալսարանի պատմական և բանասիրական ֆակուլտետներում:

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ Ա ՊԱՊԸ ԵՎ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿ Տ. ՍԵՐՈՎԲԵ ԱՐՔԵՊ. ՄԱՆՈՒԿՅԱՆԸ (ՎԱՏԻԿԱՆ)